



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0026-22

Ձեռնարկողը՝

«Հանգեզուր-95» ԱԿ
Սյունիքի մարզ, ք. Գորիս, Հ Կամարի 1

Գործունեությունը՝ «Շինուհայր» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի՝ պարտականությունները կատարող



Խ. Մարտիրոսյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0026-22

25.03.2022թ.

«ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Ջանգեզուր-95» ԱԿ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեությունը՝	«Գ» կատեգորիա
Տեղադրման վայրը՝	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղ

Ներածական մաս. Գործունեության նպատակն է շահագործվող «ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների իրականացումը:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի, 1)-ին կետի բ ենթակետի նշված գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի:

Նկարագրական մաս. «ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի կառույցները տեղադրված են Սյունիքի մարզում, Որոտան գետի Շրան վտակի ափին: Ներկայումս ՓՀԷԿ-ը շահագործվում է շրջակա միջավայրի նախարարության կողմից «Ջանգեզուր-95» ԱԿ-ին տրված №000219 ջրօգտագործման թույլտվության պահանջներն համապատասխան: ՓՀԷԿ-ի ջրառն իրականացվում է 1048.0մ. նիշում, իսկ ջրահեռացումը՝ 834.0մ.:

Որոտան գետի ավազանն ամբողջությամբ գտնվում է Սյունիքի մարզում, գետը տիպիկ լեռնային գետ է, սկիզբ է առնում երկու փոքր լճակներից. որոնք գտնվում են Ղարաբաղյան լեռնաշղթայի համակարգի մեջ մտնող լեռան լանջերի վրա (3045մ նիշ), այնուհետև գետը իր ընդունում է բազմաթիվ աղբյուրների հոսքեր, հանդիսանում է Արաքս գետի ձախակողմյա ամենախոշոր վտակներից մեկը և թափվում է վերջինիս մեջ գետաբերանից 236կմ վերև: Գետը ունի խառը սնուցում, որի համար կարևոր դեր են խաղում գրունտային և անձրևային ջրերը, սնուցման հիմնական աղբյուրը հանդիսանում են ձնհալի ջրերը, գետի ամբողջ երկարությունը 194կմ է, ավազանի ընդհանուր ջրհավաք մակերեսը կազմում է 5540կմ²: Հայաստանի տարածքում գետի երկարությունը 129կմ է, ջրհավաք մակերեսը՝ 2020 կմ²: Գետը ձնհալային ջրերը սնում են գարնանային վարարումների ժամանակաշրջանում, իսկ անձրևային ջրերը՝ գարնանային և ամառային ժամանակաշրջանում՝ հեղեղումների տեսքով: Գետի ձախ ափը համարյա գործնականում ամբողջությամբ զբաղեցված է անտառով:



վտակներից՝ առանձնապես միջին հոսանքներում, փոխարենը այս ափից են սկիզբ առնում հզոր աղբյուրներ՝ Շաքիի, Զոր-Զորի, Ուրուտի և այլն: Բարձրադիր հատվածներում հաճախ առաջանում են սառցային կուտակումներ, որոնց հալոցքից ջրի մակարդակը բարձրանում է միջինը 0.1-0.2մ:

Շրան վտակն ունի խառը սնուցում, որի հիմնական աղբյուրն առաջանում է ձնհալքից, աղբյուրներից, անձրևներից, ինչպես նաև ֆիլտրացիոն ջրերից: Առավելագույն ելքերը դիտվում են ապրիլ-հունիս ամիսներին: Շրան վտակի ավազանի վերին նիշերում տարածված է մարգագետնա-տափաստանային բուսականություն, իսկ միջին հոսանքում, որտեղ գտնվում են ՓՀԷԿ-ի կառուցվածքները՝ տափաստանային բուսականություն: Կենդանական աշխարհի ներկայացուցիչների կազմը պայմանավորված է տարածքների բնակլիմայական ցուցանիշներով և բուսական ծածկույթի տեսակներով: Գետափնյա տարածքներում հիմնականում գերակշռում է լեռնատափաստանային գետերին բնորոշ կենդանական աշխարհը:

ՓՀԷԿ-ի ենթակառուցվածքների և հարակից տարածքներում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների տեսակները: ՓՀԷԿ-ը ամբողջովին գոյություն ունեցող է և ըստ ներկայացված հայտի նոր կառույցների շինարարական աշխատանքներ չեն նախատեսվում: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ վերագինումը չի ներառում շինարարական աշխատանքների իրականացում և նոր տարածքների օգտագործում, ուստի բացառվում է որևէ ազդեցություն բուսական ծածկույթի և կենդանական աշխարհի վրա:

Շահագործվող ՓՀԷԿ-ի հաշվարկային ելքը վերցվում է պատվարային ջրընդունիչից սկիզբ առնող ճնշումային խողովակաշարից, և ՓՀԷԿ-ի շենքում պատագործվելուց հետո վերադարձվում է գետ՝ առանց որակի ու քանակի փոփոխության: ՓՀԷԿ-ի աշխատանքը չի խախտում օգտագործվող գետահատվածում ջրասպառողների ռեժիմը: Բնապահպանական նվազագույն ելքը օգտագործվող գետահատվածի համար կազմում է 0.03 մ³/վրկ (30լ/վրկ), ինչը սահմանված է նաև ջրօգտագործման թույլտվությամբ:

Նախկին նախագծով Շինուհայր ՓՀԷԿ-ում ձկնանցարան չի նախատեսվել, հաշվի է առնվել, որ ՓՀԷԿ-ը օգտագործելու է աղբյուրի ջրերը և Տաթև ՓՀԷԿ-ի դերիվացիոն թունելից առաջացող ֆիլտրացիոն ջրերը, ինչով հիմնավորվել է ՓՀԷԿ-ի կառույցներում ձկնապաշտպան կառուցվածքի չնախատեսելը: ՓՀԷԿ-ը ստացել է բոլոր անհրաժեշտ թույլտվությունները, ինչպես նաև դրական փորձաքննական ԲՓ-139 եզրակացությունը տրված 09.12.2005թ., որտեղ ևս ամրագրված է եղել կառուցվածքների կազմում ձկնանցարան չնախատեսելը:

Վերագինման նպատակով նախատեսվում է ՓՀԷԿ-ի համար օգտագործելի Շրան վտակի/ Որոտան գետի վտակ/ ավելցուկային ելքերը հաշվի առնելով պատվիրատուի կողմից ներդրումներ կատարելու հնարավորությունները և հիդրոէներգետիկ պաշարների արդյունավետ օգտագործումը:


Ելնելով գետի տվյալ հատածքում 50% ապահովության տարվա հոսքի միջին ամսեկան տվյալներից և բնապահպանական անհրաժեշտ ելքի մեծությունից կատարվել է ՓՀԷԿ-ի հիմնական պարամետրերի ընտրություն և դրանց հիմնավորում:

Դերիվացիայով ՓՀԷԿ-ի կարևոր պարամետրերն են՝ հաշվային ելքը, հաշվային ճնշումը և դրվածքային հզորությունը:

Վերագինումից հետո «ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի հիմնական էներգետիկ ցուցանիշները, որոնք ամրագրված են հայտում կլինեն՝

Դրվածքային հզորությունը՝ $N = 1208.0 \text{ կՎտ}$,

Ստատիկ ճնշումը՝ $H_u = 214.0 \text{ մ}$,



Հաշվարկային ճնշումը՝ $H = 205.20\text{մ}$,
Հաշվարկային ելքը՝ $Q = 0.75\text{մ}^3/\text{վրկ}$,

Միջին տարեկան արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը՝ $N = 8.91\text{մլն.կՎտ.ժ}$:

Արտադրած էլեկտրական էներգիան, ինչպես նախկինում այնպես էլ վերագինումից հետո նախատեսվում է տալ Հայաստանի Հանրապետության ընդհանուր էներգահամակարգին:

«ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի կազմի մեջ են մտնում հետևյալ հիմնական կառուցվածքները՝

1. Պատվարային ջրընդունիչ՝ կառուցվել է Որոտան գետի Շրան վտակի վրա 1048.0մ նիշում, որն իրենից ներկայացնում է բետոնային ջրթափային կառուցվածք: Բետոնային ջրթափային պատվարի աջ կողմում կառուցված է ջրընդունիչ:

2. Ճնշումային դերիվացիոն խողովակաշար՝ երկարությունը՝ 1555.0մ , որի տրամագիծը կազմում է 820մմ : Այն սկսվում է ջրընդունիչից, ավարտվում է տուրբինային փականի մոտ: Խողովակաշարը հիմնականում ծածկված է բնահողով:

3. Փհեկ-ի շենքը կառուցված է և գտնվում է Սյունիքի մարզի Տաթև համայնքի Շինուհայր բնակավայրի վարչական տարածքում, բնակելի տարածքներից նվազագույնը 5կմ հեռավորության վրա: Շենք վերգետնյա տիպի է, որտեղ տեղադրված երկու հիդրոտուրբինաները, հիդրոագրեգատները ունեն ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ, հիդրոագրեգատների հիմքերն արված են երկաթբետոնից: Ղեկավարման, ավտոմատացման և հսկողության կայանային սարքավորումները ապահովում են կայանի նորմալ աշխատանքը ավտոմատ ռեժիմով: Շենքի չափերը որոշված են ըստ ագրեգատների չափերի և նրանց օժանդակ սարքավորումների դասավորության: Ինչպես նշված է հայտում շենքում տեղադրված է էլեկտրական կամրջային ամբարձիչ $5,0\text{տ}$ բեռնաբարձությամբ:

Մինչև ՓՀԷԿ-ի շենք մտնելը խողովակաշարի վրա տեղադրված է AKPOH-01 տեսակի ջրաչափիչ սարքավորում:

Հիդրոագրեգատների հիմնական պարամետրերն են՝


1. Հիդրոտուրբինա ՆԵ1.՝ CJA237-W-70/1*9, 400-800 կՎտ, 2011 թ.,
2. Գններատոր ՆԵ1.՝ SFW630-8/1180, 630 կՎտ, 2011 թ.,
3. Հիդրոտուրբինա ՆԵ2.՝ CJA237-W-70/1*9, 400-800 կՎտ, 2011 թ.
4. Գններատոր ՆԵ2.՝ SFW630-8/1180, 630 կՎտ, 2011 թ.:

Շենքի ջեռուցումը իրականացվում է 5կՎտ հզորության էլեկտրական ջերմաօգամղիչներով, որը ձմռանը ծառայում է որպես ջեռուցիչ, իսկ ամռանը որպես օդափոխիչ, շենքում տեղադրված են երեք հատ հակահրդեհային մարիչներ:

Ուղղանկյուն կտրվածքով հեռացնող ջրանցքով օգտագործված ջրերը հեռացվում են դեպի Որոտան գետի Շրան վտակ:

Հայտում ներկայացվել է նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և դրանց բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, որոնք ուղղված են առաջացող տարբեր տեսակի թափոնների կառավարմանը և հեռացմանը, բացառելով դրանց այրումը հրապարակի տարածքում:

Քանի որ, տրանսֆորմատորը պատկանում է «ՀԷՏ» ՓԲԸ-ին, ուստի ընկերության կողմից ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում տրանսֆորմատորային յուղերի թափոնների կառավարվում չի իրականացվում, այն կառավարվում է «ՀԷՏ» ՓԲԸ-ի կողմից:



ՓՀԷԿ-ի ագրեգատներ համապատասխան սարքավորումներն արդեն իսկ ծածկված են մետաղական կաղապարով, ինչը կանխարգելում է աղմուկի ազդեցությունը շրջակա տարածքներ: Սակայն որպես աղմուկի կանխարգելիչ միջոցառում նախատեսվում է նաև շահագործման ընթացքում սարքավորումների բավարար տեխնիկական վիճակի ապահովում, պարբերաբար ստուգման և կարգաբերման միջոցառումներ:

Քանի որ ՓՀԷԿ-ում տեղադրված հիդրոագրեգատներն ունեն ավտոմատ կառավարման համակարգ, հնարավոր արտակարգ պատահարները բացառվում են, իսկ խողովակաշարերի վնասման դեպքում այն կփոխարինվի նորով:

ՓՀԷԿ-ի շենքի տարածքը 2000քմ և ավել մակերեսով կանաչապատված է, տնկված են տարածաշրջանին բնորոշ պտղատու ծառեր: Նախատեսվում է լրացուցիչ իրականացնել կանաչապատ տարածքների խնամքի, մաքրման աշխատանքներ, իսկ շահագործման փուլում մոնիթորինգի միջոցառում, որը ներառում է ջրառի հանգույցում վարարաջրերի բերման արդյունքում ջրաբերուկների հեռացման, մաքրման աշխատանքները: Նախատեսվող միջոցառումների իրականացման համար նախատեսված է 500000 ՀՀ դրամ:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր այլ ազդեցությունները բացառվում են քանի որ, շինարարական աշխատանքներ չեն իրականացվելու: Շահագործման փուլում կարևոր է բնապահպանական թողքի սահմանված չափաքանակի պահպանումը և առաջացող թափոնների կառավարման միջոցառումների իականացումը:

Պատճառաբանական մաս. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, նախնական գնահատման և փորձաքննության փուլերում, Սյունիքի մարզի Տաթև խոշորացված համայնքի Շինուհայր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:


Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ «Արտակարգ իրավիճակների», «Առողջապահության», «Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի» նախարարություններից, «Քաղաքաշինության կոմիտեից», «Կադաստրի կոմիտեից», «Սյունիքի մարզպետարանից» կողմից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել «Հայտի» լրամշակումներում:

Փորձաքննական պահանջներ

1. Անհրաժեշտ է պահպանել ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի N 15 հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

2. Ջրընդունիչ հանգույցում /բնապահպանական թողքի և ՓՀԷԿ-ի ջրառի կետեր/ անհարժեշտ է ապահովել ջրաչափիչ սարքավորումներ, որոնք կահավորված կլինեն ավտոմատ կառավարման և առցանց վերահսկման համակարգերով:

3. Ապահովել ջրառ հանգույցում մոնիթորինգի միջոցառման իրականացումը և պահպանել գետի և շրջակա տարածքների սանիտարական վիճակը, առաջացող տարբեր տեսակի թափոնները /կենցաղային աղբ, տրանսֆորմատորային յուղ և այլն/ հեռացնել սահմանված կարգով:



4. ՓՀԷԿ-ի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել «Զանգեզուր-95» ԱԿ-ի կողմից Շինուհայր համայնքում նախատեսված սոցիալական ծրագրերի իրականացումը և չխոչընդոտել ոռոգման աշխատանքներին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՇԻՆՈՒՀԱՅՐ» ՓՀԷԿ-ի վերազինման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական փորձաննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն»
ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝



Ն. Նասիրյան